

**Գ Ա Վ Ա Ռ Ի Պ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ա Մ Ա Լ Ս Ա Ր Ա Ն Ի
Հ Ո Գ Ա Բ Ա Ր Ձ Ո Ւ Ն Ե Ր Ի Խ Ո Ր Հ Ր Դ Ի 2017 Թ Վ Ա Կ Ա Ն Ի
Հ Ո Ւ Ն Վ Ա Ր Ի 26- Ի Թ Ի Վ 1 Ն Ի Ս Տ Ի
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 1**

Գ Պ Հ Հ Ո Գ Ա Բ Ա Ր Ձ Ո Ւ Ն Ե Ր Ի Խ Ո Ր Հ Ր Դ Ի Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ը Հ Ա Ս Ս Ա Տ Ե Լ Ո Ւ Մ Ա Մ Ի Ն

Ղեկավարվելով «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ Գավառի պետական համալսարանի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Գավառի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգը՝ համաձայն հավելվածի:

Հոգաբարձուների խորհրդի

նիստը նախագահող՝

Վ. Խաչատրյան

**Գ Ա Վ Ա Ռ Ի Պ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ա Մ Ա Լ Ս Ա Ր Ա Ն Ի
Հ Ո Գ Ա Բ Ա Ր Ձ Ո Ւ Ն Ե Ր Ի Խ Ո Ր Հ Ր Դ Ի 2017 Թ Վ Ա Կ Ա Ն Ի
Հ Ո Ւ Ն Վ Ա Ր Ի 26- Ի Թ Ի Վ 1 Ն Ի Ս Տ Ի
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N2**

**Գ Պ Հ Հ Ո Գ Ա Բ Ա Ր Ձ Ո Ւ Ն Ե Ր Ի Խ Ո Ր Հ Ր Դ Ի
Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ի Ը Ն Տ Ր Ո Ւ Թ Յ Ա Ն Մ Ա Ս Ի Ն**

Ղեկավարվելով «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 32-րդ կետով և Գավառի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.3 կետով՝ Գավառի պետական համալսարանի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Գավառի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի նախագահ ընտրել Հայաստանի Հանրապետության Սփյուռքի նախարար, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրանուշ Հրանտի Հակոբյանին:

Հոգաբարձուների խորհրդի

նիստը նախագահող՝

Վ. Խաչատրյան

Գ Ա Վ Ա Ռ Ի Պ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ա Մ Ա Լ Ս Ա Ր Ա Ն Ի
Հ Ո Գ Ա Բ Ա Ր Ձ Ո Ի Ն Ե Ր Ի Խ Ո Ր Հ Ր Դ Ի 2017 Թ Վ Ա Կ Ա Ն Ի
Հ Ո Ի Ն Վ Ա Ր Ի 26- Ի Թ Ի Վ 1 Ն Ի Ս Տ Ի
Ո Ր Ո Շ Ո Ի Մ Ն 3

ԳՊՀ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.3 կետով՝ Գավառի պետական համալսարանի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Գավառի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի քարտուղար ընտրել ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի դասախոս, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Անահիտ Մամվելի Մարգարյանին:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝

Հ. Հակոբյան

Գ Ա Վ Ա Ռ Ի Պ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ա Մ Ա Լ Ս Ա Ր Ա Ն Ի
Հ Ո Գ Ա Բ Ա Ր Ձ Ո Ի Ն Ե Ր Ի Խ Ո Ր Հ Ր Դ Ի 2017 Թ Վ Ա Կ Ա Ն Ի
Հ Ո Ի Ն Վ Ա Ր Ի 26- Ի Թ Ի Վ 1 Ն Ի Ս Տ Ի
Ո Ր Ո Շ Ո Ի Մ Ն 4

ԳՊՀ ՌԵԿՏՐՈՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ

ՌԵԿՏՐՈՐԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՄԱՐ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 40-րդ կետի 2-րդ ենթակետով և «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4-րդ կետի 2-րդ ենթակետով՝ Գավառի պետական համալսարանի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Գավառի պետական համալսարանի ռեկտորի ընտրության կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:
2. «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի պաշտոնի համար հայտարարել բաց մրցույթ:
3. Հոգաբարձուների խորհրդի քարտուղարին հանձնարարել՝ ԳՊՀ ռեկտորի ընտրության կանոնակարգով սահմանված կարգով և ժամկետներում ապահովել մրցույթի

անցկացման մասին հայտարարության հրապարակման, թեկնածուների հայտերի և անհրաժեշտ փաստաթղթերի ընդունման գործընթացը:

4. ԳՊՀ ռեկտորի ընտրությունն անցկացնել 2017թ. փետրվարի 25-ին:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝

Հ. Հակոբյան

**Գ Ա Վ Ա Ռ Ի Պ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ա Մ Ա Լ Ս Ա Ր Ա Ն Ի
Հ Ո Գ Ա Բ Ա Ր Ձ Ո Ւ Ն Ե Ր Ի Խ Ո Ր Հ Ր Դ Ի 2017 Թ Վ Ա Կ Ա Ն Ի
Հ Ո Ւ Ն Վ Ա Ր Ի 26- Ի Թ Ի Վ 2 Ն Ի Ս Տ Ի
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 5**

ք. Գավառ

26. 01. 2017թ.

I. Լսելով Գավառի պետական համալսարանի ռեկտորի պաշտոնակատար Ռ. Խ. Հակոբյանի հաշվետվությունը համալսարանի 2015-2016 ուսումնական տարվա գործունեության և ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի կատարման վերաբերյալ և ղեկավարվելով «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 40-րդ կետի 3-րդ ենթակետով՝ ԳՊՀ հոգաբարձուների խորհուրդը որոշում է. / **ՈՐՈՇՈՒՄ N 5**/

1. Հավանություն տալ Գավառի պետական համալսարանի 2015-2016 ուսումնական տարվա գործունեության և ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի կատարման վերաբերյալ ռեկտորի հաշվետվությանը:

2. Գավառի պետական համալսարանի 2015-2016 ուսումնական տարվա գործունեությունը գնահատել բավարար:

/ ՈՐՈՇՈՒՄ N 6/

II. Լսելով Գավառի պետական համալսարանի ռեկտորի պաշտոնակատար Ռ. Խ. Հակոբյանի ֆինանսական հաշվետվությունը՝ համալսարանի 2016 թվականի բյուջեի կատարման վերաբերյալ՝ ԳՊՀ հոգաբարձուների խորհուրդը որոշում է. / **ՈՐՈՇՈՒՄ N 6**/

Հաստատել Գավառի պետական համալսարանի 2016 թվականի ֆինանսական հաշվետվությունը:

ՈՐՈՇՈՒՄ N 7

III. Լսելով Գավառի պետական համալսարանի ռեկտորի պաշտոնակատար Ռ. Խ. Հակոբյանի զեկուցումը ԳՊՀ 2017 թվականի ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշվի վերաբերյալ՝ ԳՊՀ հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

/ ՈՐՈՇՈՒՄ N 7/

1. Հաստատել Գավառի պետական համալսարանի 2017 թվականի ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշիվը՝ ԳՊՀ բյուջեն:
2. Հանձնարարել ԳՊՀ ռեկտորի պաշտոնակատարին՝ 2017 թվականի ծախսերը կատարել հաստատված բյուջեին համապատասխան:
3. Հաշվի առնելով, որ Գավառի պետական համալսարանի կազմակերպչական կարգավիճակը ՊՈԱԿ-ից փոխվել է Հիմնադրամի, որի ֆինանսական հաշվետվության աուդիտի նպատակով անհրաժեշտ է ընտրել աուդիտորական կազմակերպություն և ղեկավարվելով «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 40-րդ կետի 9-րդ ենթակետով ու Գավառի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 9-րդ ենթակետով՝ ԳՊՀ հոգաբարձուների խորհուրդը որոշում է «ԷՆ Աուդիտ» ՍՊԸ-ին ընտրել որպես «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի 2016 թվականի կիսամյակի և 2017 թվականի ֆինանսական հաշվետվությունների աուդիտ իրականացնող կազմակերպություն:

ՈՐՈՇՈՒՄ N 8

IV. Լսելով Գավառի պետական համալսարանի ռեկտորի պաշտոնակատար Ռ. Խ. Հակոբյանի առաջարկը «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կառուցվածքի հաստատման վերաբերյալ և ղեկավարվելով «Գավառի պետական

համալսարան» հիմնադրամի կանոնադրության 40-րդ կետի 5-րդ ենթակետով՝ ԳՊՀ հոգաբարձուների խորհուրդը որոշում է. / **ՈՐՈՇՈՒՄ N 8**/

1. Հաստատել «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կառուցվածքը:

ՈՐՈՇՈՒՄ N 9

V. Լսելով Գավառի պետական համալսարանի ռեկտորի պաշտոնակատար Ռ. Խ. Հակոբյանի առաջարկը «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի հաստիքացուցակի հաստատման վերաբերյալ և ղեկավարվելով «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 40-րդ կետի 6-րդ ենթակետով՝ ԳՊՀ հոգաբարձուների խորհուրդը որոշում է. / **ՈՐՈՇՈՒՄ N 9**/

1. Հաստատել «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի հաստիքացուցակը:

ՈՐՈՇՈՒՄ N 10

VI. Լսելով Գավառի պետական համալսարանի ռեկտորի պաշտոնակատար Ռ. Խ. Հակոբյանի առաջարկը «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի գույքի տնօրինման կարգի հաստատման վերաբերյալ և ղեկավարվելով «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 40-րդ կետի 16-րդ ենթակետով՝ ԳՊՀ հոգաբարձուների խորհուրդը որոշում է. / **ՈՐՈՇՈՒՄ N 10**/

1. Հաստատել «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի գույքի տնօրինման կարգը:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝ Ն. Ն. Հակոբյան

**«Գ Ա Վ Ա Ռ Ի Պ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ա Մ Ա Լ Ս Ա Ր Ա Ն» Հ Ի Մ Ն Ա Դ Ր Ա Մ Ի
Հ Ո Գ Ա Բ Ա Ր Չ Ո Ւ Ն Ե Ր Ի Խ Ո Ր Հ Ր Դ Ի 2017 Թ Վ Ա Կ Ա Ն Ի
Փ Ե Տ Ր Վ Ա Ր Ի 25-Ի Թ Ի Վ 3 Ն Ի Ս Տ Ի**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 11

«Գ Ա Վ Ա Ռ Ի Պ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ա Մ Ա Լ Ս Ա Ր Ա Ն» Հ Ի Մ Ն Ա Դ Ր Ա Մ Ի

Ռ Ե Կ Տ Ո Ր Ը Ն Տ Ր Ե Լ Ո Ւ Մ Ա Մ Ի Ն

ք. Գավառ

25.02.2017թ.

Ղեկավարվելով «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 40-րդ կետի 2-րդ ենթակետի, «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4-րդ կետի 2-րդ ենթակետի և «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի ընտրության կանոնակարգի 5. 17-րդ կետի ա) ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով Գավառի պետական համալսարանի ռեկտորի թափուր պաշտոնի համար փակ (գաղտնի) քվեարկության արդյունքները՝

Գավառի պետական համալսարանի հոգաբարձուների խորհուրդը **Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտոր ընտրել իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ Ռուզաննա Խաչիկի Հակոբյանին:
2. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ կրթության պետական կառավարման լիազոր մարմնին՝ ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնելու համար:

«Գավառի պետական համալսարան» հիմնադրամի

հոգաբարձուների խորհրդի նախագահ՝

Հ.

Հակոբյան

**«ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 25-Ի
ՈՐՈՇՈՒՄ N 12**

**«ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
2017-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք. Գավառ

25 մարտի 2017թ.

Ղեկավարվելով «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 38-րդ կետով և 40-րդ կետի 4-րդ ենթակետով, ինչպես նաև «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4-րդ կետի 4-րդ ենթակետով և 3.4-րդ կետով, հարցման կարգով Գավառի պետական համալսարանի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի 2017-2022 թվականների ռազմավարական ծրագիրը:
2. Հանձնարարել ռեկտորին՝ ապահովել «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի 2017-2022 թվականների ռազմավարական ծրագրի կատարումը:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝

Հ. Հ. Հակոբյան

